ՈՒՍՄԱՐԻ 2022-2023 / ANNÉE UNIVERSITAIRE 2022-2023
Փորձնական քննություններ/ Examens blancs
2-րդ կիսամյակ / 2ème semestre

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

FORMULAIRE DE RÉPONSES / ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (11 միավոր)
1.1. առաջադրանքը գնահատվում է 9 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,25 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 0,5 միավոր:
1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:
Առաջադրանք 2. (7 միավոր)
2.1. առաջադրանքի համար տրվում է 3 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
2.2. առաջադրանքի համար տրվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Առաջադրանք 3. (8 միավոր)
3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 3-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
3.3. առաջադրանքը գնահատվում է 2 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 4. (8 միավոր)
4.1., 4,2 առաջադրանքները գնահատվում են 2-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
4.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Առաջադրանք 5. (6 միավոր)
5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 2-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:

Փորձնական քննություն

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,25 միավոր:

Առաջադրանք 1 (11 միավոր)

1.1. Անհրաժեշտության դեպքում լրացնել բաց թողած տառերը և կետադրել (9 միավոր):

Փոքրիկ Ռաֆայելը, առաջին անգամ տեսնելով իրենց նոր տունը, անակxնկալից քար կտրեց, և աչքերը լայնացան, բերանը բացվեց, ու ձեռքերն էլ իրենք իրենց հեռացան կողերից։ Իրենց բեռլինյան տունը խաղաղ փողոցում էր՝ բազմաթիվ նույնպիսի մեծ ու հյուրընկալ տներով շրջապատված, և դրանց նայելն իսկական հաճույք էր, քանի որ իրար շատ նման էին՝ չհաշված փոքրիկ տարբերությունները, և այդ տներում իր նման տղաներ էին ապրում, որոնց հետ նա խաղում էր ամեն օր։ Իսկ նոր տունը միայնակ կանգնած էր մեկուսի վայրում. շրջապատում որևէ այլ շինության հետքն անգամ չկար, ինչն իր հերթին նշանակում էր՝ այդ վայրերում որևիցե ընտանիք չէր կարող ապրել, և այդ ընտանիքներում ոչ մի տղա՝ ո՛չ նույն ճամբարից և ո՛չ հակառակ կողմից, այստեղ չէր ապրում։

Բեռլինյան տան շուրջբոլորը փողոցներ էին՝ ընդxարձակ տներով, և երբ քայլում էիր քաղաքի՝ միջնադարի ճարտարապետությամբ հայտնի կենտրոն տանող ճանապարհով, անընդհատ հանդիպում էիր շտապող անցորդների, որոնք կանգնում էին փողոցում՝ միմյանց հետ շաղակրատելու, կամ արագ անցնում էին՝ ասելով՝ զրուցելու ժամանակ չունեն։ Այնտեղ խանութներ կային՝ լուսավոր ցուցափեղկերով, մրգի ու բանջարեղենի բազմաթիվ կրպակներ՝ բեռնավորված գազարի ու եգիպտացորենի կույտերով։ Կրպակների մի խումբը սխտոր ու շաղգամ էր վաճառում, մեկ այլ խումբ էլ՝ դդմիկ ու ստեպղին։ Նա սիրում էր կանգնել այդ կրպակների առաջ փակ աչքերով և երբ փակում էր աչքերը, միայն դատարկություն ու ցուրտ էր զգում,//. ասես աշխարհի ամենամեկուսի վայրում լիներ. այս տարբերությունը մի տեսակ սարսռեցնում էր փոքրիկ տղային և վախ առաջացնում նրա մանկական հոգում։

1.2. Նշել այն շարքը, որի բառերի բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառերով (1 միավոր)

Ա) ՆՈՐ ԳՎԻՆԵԱ, ԴԱՇՏԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ, ՋՈՐՋ ԲՈՒՇ ԿՐՏՍԵՐ, ԳՐԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Բ) ՍԱՆ ՍՏԵՖԱՆՈ, ԿՈՒՐԻԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԴՈՄԻՆԻԿՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՊԵՏՈՒԹՅՈՒՆ)

Գ) ՆԵՐՔԻՆ ԹԱԼԻՆ, ՆԵՐՍԵՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, ՄԱՐ ԱԲԱՍ ԿԱՏԻՆԱ, ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ, ՄԵԾ ՀԱՅՔ

Դ) ԲԱՀՐԵՅՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ, ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲ, ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ԱՇՈՏ ԲՌՆԱԿԱԼ, ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

1. 3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բաղադրիչները գրվում են անջատ (1 միավոր):

ա) ի (տրիտուր), Ծովասարն (ի) վեր, թույլ (տալ), ըստ (կարգի), հավուր (պատշաճի)
բ) մեծ (մասամբ), վեր (կենալ), հարյուր (տասը), հայ (արաբական), դեմ (դիմաց)
գ) մեջ (բերում), հօդս (ցնդել), սարից (սար), թերի (բարձրագույն), գլուխ (գլխի)
դ) ձեռք (սեղմել), մեջք (մեջքի), վեց (ութերորդ), աշխարհից (աշխարհ) գյուղե(գյուղ)

2.1. Աջ և ձախ սյունակներից մեկական արմատ ընտրելով՝ կազմել վեց բարդ բառ (3 միավոր).

հնավանդ	նմանապես	ավանդավեպ
մրգատու	բնակատեղի	մրգալի//մրգալից
արիանալ	ելակետային	քաջարի
մանկամարդ	վիպասան	մարդանման
հետայսու	քաջամարտիկ	այստեղ
հետամտել	լցակայան	ելումուտ

2.2. Ընդգծել բարդ բառերը (4 միավոր):

Անկարգել, հրաշապատում, միջնակարգ, նույնպես, խոչընդոտ, պարականոն, հատկապես, պարահրապարակ, մեկնարկ, ռմբարկու, նախնադար, վերնատուն, հատակագիծ, բյուրաղի, գմբեթարդ, հետնաբեմ, տարուբերում, արժանահավատ, բաժնետոմս:

3.1. Ընտրել հոմանիշների վեց զույգ (3 միավոր):

Հածել, տառապել, սրդոռել, տոգորել, ոթել, դեգերել, հեծել, ասմունքել, ոգորել, հեղել, ոգել բարկանալ, մաքառել, հեղեղել:

հածել- դեգերել
տառապել-հեծել
սրդոռել- բարկանալ
ոթել-հեղել
ասմունքել-ոգել
ոգորել- մաքառել

3. 2. Ընտրել հականիշների վեց զույգ (3 միավոր):

Ուրբաթախոս, վեհանձն, թանձրամիտ, հայրենի, զորեղ, վեհերոտ, առյուծասիրտ, մեղմաբարո, ճղճիմ, թույլ, օտար, գորովագութ, խոհեմ, շաղակրատ:

ուրբաթախոս-շաղակրատ
վեհանձն-ճղճիմ
թանձրամի-խոհեմ
հայրենի-օտար
զորեղ-թույլ
վեհերոտ-առյուծասիրտ

3.3. Գտնել դարձվածքի սխալ բացատրություն ունեցող շարքերը (2 միավոր):

ա) ձեռքերը լվանալ – հույսը կտրել, հին դարմանը քամուն տալ – նորից հիշեցնել, զենքերը վայր դնել – հպատակվել

բ) սիրտը թունդ առնել – բորբոքվել, կողի ընկնել – պնդել, խոսքի թելը կտրել – ընդմիջել

գ) նիզակ ճոճել – մարտնչել, ոտքերն ամպոտ – անմեղ, լուն ուղտ դարձնել –ուռճացնել

դ) պատվեր տալ – ապսպրել, մեջքը դարձնել – հեռանալ, խոսք հասկացնել – համոզել

ե) նոր էջ բացել – հայտնագործել, գլուխը ծեծել-տանջվել, ոտքով գլխով – իսպառ

զ) ոտքից գլուխ չափել – ուսումնասիրել, ձեռքերը շփել – հաջողությունից ուրախանալ, լուսնից ընկած – անտեղյակ

4.1. Նշել փակագծերում տրված բառերի ճիշտ տարբերակը (2 միավոր):

ա) Մանկության հաշտ ընկերների (ներհակ, հակամետ) բնավորությունն այժմ զարմացնում էր բոլորին:

բ) Զեկուցողը ճիշտ ներկայացրեց այդ (հասկացության, հասկացողության) իմաստը:

գ) (Ավանդությունը, ավանդույթը) պատմում է, որ Փարվանա լճի տակ ամրոց կա:

դ) (Զուրկ, զերծ) լինելով կենսական միջոցներից՝ նա օգնություն էր խնդրում պատահական անցորդներից:

4.2. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (4 միավոր):

Բազմիցս անգամ, ըստ իս, ասեկոսներ, հանքափորեր, կորում է, մի՛ խոսի, հօգուտ ձեզ, շտաբեր, պիտի կորչենք, խաչակնքել, վիճվել, տուժել են, կանգնած չէ, փախնենք, քո համար,

հանձինս ժողովրդի, լուսանցքներ, քեզ մոտից, առանց երազանք, դեղաչափեր, դեղորայքներ, քարայծներ:

4.3. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (2 միավոր):

Մտքերով տարված՝ հին սանդուղքով բարձրացավ վեր, զգուշորեն պտտեց բանալին կողպեքում, մտավ դռնից ներս՝ զգույշ քայլերով փորձելով անշշուկ անցնել խավար միջանցքով, բայց կորավ մթության մեջ:

(քայլ, կորչել, տանել, կողպեք)

5.1. Գտնել խնդրառության սխալ ունեցող նախադասությունները և ուղղել (2 միավոր):

1. Իշխանությունները որևէ մեկին թույլ չեն տա խոչընդոտել մեծ գիտնականի փորձարկումներիթը:
2. Նրանք պատրաստ են խոսելու տեղի ունեցած վայրագություններից:
3. Ձեռնարկության ղեկավարությունը համաձայնեց նոր աշխատակցի առաջարկներին:
4. Ավագ որդու բոլոր ձեռնարկումներին հայրը փորձում էր սատար կանգնել:

5.2. Գտնել համաձայնության սխալ ունեցող նախադասությունները և ուղղել (2 միավոր):

1. Արտավազդը գրում էր ողբերգություններ, ճառեր ու պատմական երկեր, որոնց մի մասը դեռևս պահպանվել է:
2. Ո՛չ տեղաբնակները, ո՛չ հյուրերը չէին փորձում աղետի օրերին օգնության ձեռք մեկնել տուժածներին:
3. Լեռնագնացներից մի քանիսը ցատկեցին լերկ ժայռի վրա և սկսեցին մագլցել դեպի վեր:
4. Եղիշե Չարենցը այն եզակի բանաստեղծն է, որ դառնում ~~են է իրենց~~ ժամանակի զգայացույցը:

5.3. Նշել պարզ նախադասությունը բարդ ստորադասականի փոխակերպման ճիշտ տարբերակը (1 միավոր):

Այդ ծանր խոսքերն այնքան բարկացրին կնոջը, որ նա սրտնեղությունից կորցրեց խոսելու ունակությունը:

ա) Այդ այնքան ծանր խոսքերը սրտնեղությունից խոսելու ունակությունը կորցրած կնոջը բարկացրին։

բ) Այդ ծանր խոսքերը սրտնեղությունից խոսելու ունակությունը կորցնելու չափ բարկացրին կնոջը։

գ) Այդ ծանր խոսքերը բարկացրին կնոջը՝ խոսելու ունակությունը սրտնեղությունից կորցնելու չափ։

դ) Այդ ծանր խոսքերը սրտնեղությունից խոսելու ունակությունը կորցնելու պես բարկացրին կնոջը։

5. 4. Նշել ուղղակի խոսքի փոխակերպման ճիշտ տարբերակը (1 միավոր)։

Տեսնելով մոտեցող անցորդին՝ մտաբերեցի քո ասածը. «Այդ մարդը մեր թշնամին է, նրան մի՛ հավատա, այլ լսի՛ր միայն ինձ»։[1]

ա) Տեսնելով մոտեցող անցորդին՝ մտաբերեցի քո ասածը, որ այդ մարդը ձեր թշնամին է, նրան չհավատաս, այլ լսես միայն իրեն։

բ) Տեսնելով մոտեցող անցորդին՝ մտաբերեցի քո ասածը, որ այդ մարդը ձեր թշնամին է, նրան չհավատամ, այլ լսեմ միայն նրան։

գ) Տեսնելով մոտեցող անցորդին՝ մտաբերեցի քո ասածը, որ այդ մարդը իրենց թշնամին է, նրան չհավատամ, այլ լսեմ միայն նրան։

դ) Տեսնելով մոտեցող անցորդին՝ մտաբերեցի քո ասածը, որ այդ մարդը մեր թշնամին է, նրան չհավատամ, այլ լսեմ միայն իրեն։

---

[1] Քանի որ առաջադրանքում բացակայում է ճիշտ պատասխանը, ցանկացած պատասխան նշելու դեպքում տրվում է մեկ միավոր։ Ճիշտ պատասխանն է. «*Տեսնելով մոտեցող անցորդին՝ մտաբերեցի քո ասածը, որ այդ մարդը մեր թշնամին է, նրան չհավատամ, այլ լսեմ միայն քեզ*»։